

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱՐԿՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐՉԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՄԱՍԻՆ

Լատվիայի Հանրապետության պետական եկամուտների ծառայությունը և ՀՀ ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Կողմեր)

ելնելով 2000 թվականի մարտի 15-ին Լատվիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև կնքված եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկերի վճարումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայի՝ տեղեկությունների փոխանակման վերաբերյալ դրույթներից (այսուհետ՝ Կոնվենցիա), ինչպես նաև Պայմանավորվող Պետությունների ներքին օրենքներից, և այն, որ Կողմերը ձգտում են ամրապնդել փոխադարձ օգնությունը, որոշեցին, որ

առանց նախապայմանների ավտոմատ տեղեկությունների փոխանակումը ամենաարդյունավետ միջոցն է սահմանային իրավիճակներում հարկերի հաշվարկման, ինչպես նաև հարկումից խուսափելը կանխելու համար,

անհրաժեշտ է ամրապնդել և խրախուսել Պայմանավորվող Կողմերի միջև ըստ հայցի և չալանավորված տեղեկությունների փոխանակումը,

տեղեկությունների փոխանակման իմաստով Լատվիայի Հանրապետության պետական եկամուտների ծառայությունը համարվում է ֆինանսների նախարարության լիազորված ներկայացուցիչը (Կոնվենցիայի իմաստով լիազոր մարմինը),

տեղեկությունների փոխանակման իմաստով ՀՀ ֆինանսների նախարարությունը Կոնվենցիայի շրջանակներում համարվում է լիազոր մարմին,

Համաձայնեցին հետևյալի շուրջ.

Հոդված 1

Ընդհանուր դրույթներ և սահմանումներ

1. Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն, Կողմերը կփոխանակեն տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Կոնվենցիայով կամ Կոնվենցիայով նախատեսված

հարկատեսակների վերաբերյալ ներքին օրենսդրությամբ նախատեսված դրույթների իրականացման համար:

2. Սույն համաձայնագրի իմաստով.

a) «Պայմանավորվող Պետություն» և «մյուս Պայմանավորվող Պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստանի Հանրապետություն կամ Լատվիայի Հանրապետություն;

b) «իրավասու մարմին» և «Կողմ» տերմինները նշանակում են.

(1) Լատվիայի Հանրապետությունում-պետական եկամուտների ծառայությունը;

(2) Հայաստանի Հանրապետությունում-ֆինանսների նախարարությունը;

c) «տեղեկությունների փոխանակում ըստ հայցի» տերմինը նշանակում է տեղեկությունների փոխանակում, որը հիմնված է առանձնահատուկ դեպքերում հայցող Պայմանավորվող Պետության կողմից կատարված հայցի հիման վրա;

d) «ավտոմատ տեղեկությունների փոխանակում» տերմինը նշանակում է նախապես որոշված տեղեկությունների պարբերաբար փոխանակում մյուս Պայմանավորվող Կողմին, առանց նախնական հայցման, նախապես հաստատված կանոնավոր ժամանակահատվածներով;

e) «տեղեկությունների չալանավորված փոխանակում» տերմինը նշանակում է Պայմանավորվող պետությանը ոչ կանոնավոր տեղեկատվության փոխանակում ցանկացած պահի առանց նախնական պահանջի;

f) «վարչական հարցում» տերմինը նշանակում է Կողմերի կողմից կատարվող վերահսկողության, ստուգումների և այլ գործողությունների իրականացում՝ հարկային օրենսդրության տեղին կատարումն ապահովելու նպատակով;

g) «էլեկտրոնային միջոցներով» տերմինը նշանակում է էլեկտրոնային սարքավորումների օգտագործում տեղեկությունների մշակման, այդ թվում՝ թվային սեղմման և պահպանման նպատակով, ինչպես նաև լարերի, ռադիո հեռարձակման, օպտիկական տեխնոլոգիաների և այլ էլեկտրամագնիսական միջոցների կիրառում;

h) «հայցող Կողմ» տերմինը նշանակում է իրավասու մարմին, որը հայցում է տեղեկություններ;

i) «հայցվող Կողմ» տերմինը նշանակում է իրավասու մարմին, որը ստանում է տեղեկություններ ստանալու հայցը:

Հոդված 2

Տեղեկությունների փոխանակում ըստ հայցի

1. Կողմերը ըստ հայցի պետք է լավագույնս և հնարավորինս շուտ տրամադրեն տեղեկատվություն և ոչ ուշ, քան հայցումը ստանալու օրվանից 6 ամսվա ընթացքում:

2. Տեղեկություններ ստանալու համար հայցը պետք է պարունակի նվազագույնը ներքոնշյալ տեղեկությունները.

- a) Հղում հատուկ հոդվածի կամ իրավական ակտի, որի հիման վրա պահանջվում է տեղեկությունը;
- b) Տեղական հարկ վճարողին վերաբերող մանրամասներ՝ անուն և ազգանուն, հարկ վճարողի նույնականացման համարը, իրավաբանական կամ հայտարարագրված ռեզիդենտության հասցեն;
- c) Ոչ ռեզիդենտին վերաբերող մանրամասներ՝ անուն և ազգանուն, հարկ վճարողի նույնականացման համարը, իրավաբանական կամ հայտարարագրված ռեզիդենտության հասցեն (առկայության դեպքում);
- d) Տեղական և ոչ ռեզիդենտ հարկ վճարողների կողմից իրականացվող գործունեություն (եթե տեղական և ոչ ռեզիդենտ հարկ վճարողը համարվում է փոխկապակցված անձինք);
- e) Խնդրո առարկա հարկատեսակը;
- f) Խնդրո առարկա ժամանակահատվածը;
- g) Խնդրի վերաբերյալ նախնական տեղեկություններ, գործարքների իրականացման մանրամասներ և տեղեկության հայցման նպատակը;
- h) Հայցվող տեղեկությունը;
- i) Առկայության դեպքում նշել տեղեկությունների հայցման հրատապությունը,
- j) Տեղական հարկ վճարողի վարչական հարցման այն փուլին առնչվող տեղեկատվություն, որի ընթացքում իրականացվում է տեղեկատվության հարցում:

3. Մյուս Պայմանավորվող կողմից տեղեկություններ ստանալու հայց ստանալուն պես, լիազորված գերատեսչությունը պետք է ստուգի արդյոք ներքոնշյալ մանրամասները ներառված են .

- a) Քննության տակ գտնվող անձի նույնականացումը,
- b) Խնդրո առարկա ժամանակահատվածը,
- c) Հայցվող տեղեկությունների բնույթը և ձևաչափը, որով լիազոր մարմինը նախընտրում է ստանալ այն,
- d) Խնդրո առարկա հարկատեսակը,
- e) Հիմնավորում, որ հայցվող տեղեկությունը կանխատեսելի առնչություն ունի
- f) Հիմք, որ հայցվող տեղեկությունը առկա է հայցվող Պայմանավորվող Պետությունում կամ տիրապետում է, կամ հնարավոր է ստանալ տվյալ անձինց հայցվող պետության օրենքների կամ իրավական կարգավորումների միջոցով,
- g) Տվյալ անձի նույնականացումը (ֆիզիկական անձանց դեպքում-անունը, ազգանունը, անհատական նույնականացման համարը, իրավաբանական անձանց դեպքում-հարկ վճարողի անունը և գրանցման կոդը), ով ենթադրվում է, որ տիրապետում է կամ կարող է ստանալ հայցվող տեղեկությունները,

և) Հայտարարություն, որ հայցող օտարերկրյա պետությունը սպառել է իր տեղեկությունների սովորական աղբյուրները, որոնք կարող էին օգտագործվել հայցվող տվյալները ստանալու համար՝ առանց վտանգի դնելու իր նպատակներին հասնելը (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կարող են բեռ հանդիսանալ անհավասար վարչական հայցող Պայմանավորվող Պետության համար,

4. Եթե ստացված տեղեկությունների հայցում բացակայում են սույն հոդվածի տեղեկությունները, հայցվող Կողմը կարող է մերժել տեղեկությունների ապահովումը և կարող է տեղեկացնել Պայմանավորվող Պետության լիազոր մարմնին հայցող մերժման պատճառների մասին:

5. Մի Կողմը պարտավոր է ծանուցել մյուս Կողմին տեղեկությունների փոխանկման հայցում հայտնաբերված թերությունների մասին՝ հայցը ստանալուց հետո 1 ամսվա ընթացքում և պետք է խնդրի շտկել, կամ անհրաժեշտության դեպքում, պահանջել լրացուցիչ տեղեկություններ: Սույն հոդվածի 1-ին պարբերությամբ սահմանված ժամկետի հետհաշվարկը սկսվում է թարմացված կամ լրացուցիչ տեղեկություններ ստանալու հաջորդ օրվանից:

6. Մի Կողմը կարող է արձագանքել մյուս Կողմից ստացված պատասխանին:

Հոդված 3

Տեղեկությունների ավտոմատ փոխանակում

1. Կոնվենցիայի 26-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ իր ներքին օրենսդրության և պրակտիկայի շրջանակներում իրեն հասանելի տեղեկությունները պետք է տրամադրի մյուս Կողմին, որոնք վերաբերում են Պայմանավորվող Պետությունում մյուս Պայմանավորվող Պետության հարկային ռեզիդենտների կողմից ստացված եկամուտներին ավտոմատ կարգով առանց հայցի:

2. Կողմերը, ավտոմատ կերպով, կփոխանակեն տեղեկություններ իրենց երկրների ռեզիդենտների վերաբերյալ սկսած սկսած 2014թ.-ից հետո հարկվող ժամանակաշրջանների վերաբերյալ եկամտի և կապիտալ ներքոնշյալ առանձնահատուկ տեսակների վերաբերյալ՝ համաձայն ներպետական օրենսդրության.

- a) Եկամուտ անշարժ գույքից,
- b) Ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտներ
- c) Շահաբաժիններ,
- d) Տոկոսներ,
- e) Ռոյալթիներ,
- f) Կապիտալի հավելած,
- g) Անկախ մասնագիտական գործունեությունից ստացված եկամուտներ,
- h) Վարձու աշխատանքից ստացված եկամուտներ,
- i) Տնօրենների հոնորարներ,
- j) Դերասանների և մարզիկների եկամուտներ
- k) Կենսաթոշակներ,
- l) Պետական ծառայությունից և պետական կենսաթոշակներից ստացված եկամուտներ,

- մ) Կրթության և վերապատրաստման նպատակով ուսանողների տրված վճարումներ,
ո) Այլ եկամուտներ:

3. Տեղեկությունների փոխանակման ավտոմատ կապը տեղի կունենա առնվազն տարին մեկ անգամ Պայմանավորվող Պետության հարկային տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում, որի ժամանակ տեղեկատվությունը հասանելի է դարձել:

4. Տեղեկությունների ավտոմատ փոխանակման ժամանակ, Կողմերը պետք է յուրաքանչյուր եկամուտ ստացողի համար ներկայացնեն ներքոնշյալ մանրամասները (այնքանով, որքանով հնարավոր է).

- a) Եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի անունը (ֆիզիկական անձանց դեպքում անուն, ազգանուն);
b) Ռեզիդենտության երկրում եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի նույնականացման քարտի կամ անձնագրի համարը;
c) Եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի ծննդյան տվյալները;
d) Ռեզիդենտության երկրում եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի հասցեն(փողոց, տան համար, քաղաքը, փոստային հասցեն);
e) Եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի ռեզիդենտության երկրի կոդը (ISO);
f) Եկամուտ ստացող ոչ ռեզիդենտի տեսակի կոդը (01 – ֆիզիկական անձ, 02 – ներդրումային կազմակերպություն, 03 – ընկերակցություն, 04 – ձեռնարկատիրական գործունեության տեսակը, որը ոչ ներդրումային ընկերություն է, ոչ ընկերակցություն, 05 – պետական կամ միջազգային կառույց, 06 – այլ, 07 – անհայտ);
g) Եկամուտ վճարողի անունը (ֆիզիկական անձանց դեպքում անուն, ազգանուն);
h) Եկամուտ վճարողի հարկ վճարողի հաշվառման կոդը;
i) Եկամուտ վճարողի հասցեն(փողոց, տան համար, քաղաքը, փոստային հասցեն);
j) Եկամուտ վճարողի կոդը (01 – ֆիզիկական անձ, 02 – ներդրումային կազմակերպություն, 03 – ընկերակցություն, 04 – ձեռնարկատիրական գործունեության տեսակը, որը ոչ ներդրումային ընկերություն է, ոչ ընկերակցություն, 05 – պետական կամ միջազգային կառույց, 06 – այլ, 07 – անհայտ);
k) Վճարվող եկամտի տեսակի կոդը (6 – եկամուտ անշարժ գույքի, 7 – շահույթ, 10 – շահաբաժիններ, 11 – տոկոս, 12 – ռոյալթի, 13 – կապիտալի հավելում, 14 – անկախ մասնագիտական ծառայություններից ստացված եկամուտներ, 15 – վարձու աշխատանքից ստացված եկամուտներ, 16 – տնօրենների հոնորարներ, 17 – դերասանների և մարզիկների եկամուտներ, 18 – կենսաթոշակներ, 19 – Պետական ծառայությունից և պետական կենսաթոշակներից ստացված եկամուտներ, 20 – Կրթության և վերապատրաստման նպատակով ուսանողների տրված վճարումներ, 21 – այլ եկամուտ);
l) Եկամտի վճարման օրը;
m) Արժույթը և վճարված եկամտի գումարը;
n) Պահվող հարկի դրույքաչափը;
o) Արժույթը և պահված հարկի գումարը:

5. Մի Կողմը կարող է տեղեկացնել մյուս Կողմին, որ չի ցանկանում ստանալ տեղեկություններ եկամտի և կապիտալի որևէ տեսակի կամ որոշակի շեմը չգերազանցող եկամուտների վերաբերյալ:

6. Մի կողմը կարող է մյուս Կողմին արձագանքել ավտոմատ ստացված տեղեկությունների վերաբերյալ:

Հոդված 4

Տեղեկությունների չալանավորված փոխանակում

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության լիազոր մարմին կարող է չնախատեսված կերպով ցանկացած տեսակի տեղեկություններ տրամադրել մյուս Պայմանավորվող Պետության լիազոր մարմնին, որին տիրապետում է և կարող է օգտակար լինել մյուս Պայմանավորվող Պետության համար, մասնավորապես.

a) Պայմանավորվող Պետության լիազոր մարմինն ունի որոշակի հիմքեր ենթադրելու, որ մյուս Պայմանավորվող Պետությունը կրում է հարկային կորուստներ;

b) Հարկման ենթակա անձը մի Պայմանավորվող Պետությունում ունի հարկից նվազեցման իրավունք կամ արտոնություն, որը մյուս Պայմանավորվող Պետությունում կհանգեցնի հարկի գումարի կամ հարկային պարտավորության աճի;

c) Մի Պայմանավորվող պետությունում հարկման ենթակա անձը, ինչպես նաև մյուս Պայմանավորվող Պետությունում հարկման ենթակա անձը համատեղ գործունեություն են իրականացնում մեկ կամ ավելի երկրներում այնպես, որ հարկի գումարի խնայում կարող է տեղի ունենալ որևէ Պայմանավորվող Պետությունում կամ երկուսում էլ;

d) Պայմանավորվող Պետության լիազոր մարմինը հիմքեր ունի ենթադրելու, որ հարկի գումարի խնայումը կարող է հանգեցնել կազմակերպությունների խմբերի միջև արհեստական շահույթի բաշխման;

e) Պայմանավորվող Պետության լիազոր մարմնի կողմից մյուս Պայմանավորվող Պետության փոխանցված տեղեկությունները ձեռք բերվելիք տեղեկատվությունը հասանելի է դարձնում, որը կարող է համապատասխան լինել հարկային պարտավորության գնահատմանը Պայմանավորվող Պետությունում:

2. Կողմերը սույն հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված տեղեկությունները միմյանց կփոխանցեն հնարավորինս շուտ և տեղեկությունները հասանելի դառնալուց հետո 1 ամսից ոչ ուշ:

3. Հայցող Կողմը կարող է հայցել հայցվող Կողմին չնախատեսված տեղեկություններ ստանալու դեպքում արձագանքել: Եթե հայցվել է, ապա պետք է արձագանքել առանց հապաղման և ոչ ավելի ուշ, քան երեք ամիս հետո այն բանից, երբ չնախատեսված տեղեկությունների օգտագործման արդյունքները դարձել են հայտնի:

Հոդված 5 Ծախսեր

Եթե այլ բան համաձայնեցված չէ Կողմերի միջև, ապա աջակցության ապահովման համար կատարված սովորական ծախսերը կատարում է հայցող Կողմը: Չնախատեսված ծախսերը կատարում է հայցող Կողմը՝ ըստ նախնական համաձայնության:

Հոդված 6 Գաղտնիություն

Փոխանակված տեղեկության օգտագործումը և բացահայտումը պետք է իրականացվի Կոնվենցիայի 26-րդ հոդվածի գաղտնիության դրույթներով:

Հոդված 7 Ստանդարտ ձևեր և համակարգչայնացված ձևաչափեր

3-րդ հոդվածին վերաբերող տեղեկությունները հնարավորիս պետք է տրամադրվեն ստանդարտ ձևով՝ օգտագործելով Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) ստանդարտ փոխանակման ձևը:

Հոդված 8 Լիազոր մարմինների կոնտակտային տվյալները

Սույն Համաձայնագրի կիրառման նպատակով լիազոր մարմինների կոնտակտային տվյալներն են.

Լատվիայի Հանրապետություն,
Պետական եկամուտների ծառայություն,
Լատվիա, Ռիգա, Թալեյաս փ. 1, LV-1978

Հայաստանի Հանրապետություն,
Ֆինանսների նախարարություն,
Հայաստան, Երևան, Մելիք Ադամյան փ.1, 0010

Պայմանավորվող Պետությունների լիազոր մարմինները կփոխանակեն սույն Համաձայնագրի կատարման համար լիազորված պաշտոնյաների ցանկը, ինչպես նաև հետագայում տեղի ունեցած փոփոխությունները:

Հոդված 9 Խորհրդատվություն

Սույն Համաձայնագրի շրջանակներում Պայմանավորվող Պետությունների լիազոր մարմինները, անհրաժեշտության դեպքում, խորհրդակցում են միմյանց հետ:

Հոդված 10 Ուժի մեջ մտնելը, փոփոխությունները և դադարեցումը


Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Հետագայում, այն կարող է փոփոխվել Պայմանավորվող պետությունների լիազոր մարմինների միջև փոխադարձ համաձայնությամբ:

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով: Այն կարող է ընդհատվել որևէ Կողմի գրավոր ծանուցման դեպքում: Լիազոր մարմինները կարող են վերանայել սույն Համաձայնագիրը ցանկացած պահի փոխադարձ բանակցությունների միջոցով:

Հոդված 11 Վեճերի կարգավորում

Վեճերը, որոնք կարող են ծագել սույն Համաձայնագրի դրույթների կիրառման կամ մեկնաբանման ժամանակ, լուծվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

Կատարված է Երևան քաղաքում, Հայաստանի Հանրապետություն, 2014 թվականի սեպտեմբերի 25-ին, կրկնօրինակները՝ անգլերեն, հայերեն և լատիշերեն լեզուներով, երեք տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ տարակարծությունների դեպքում գերակայում է անգլերեն լեզվով տեքստը:

Լատվիայի Հանրապետության Պետական եկամուտների ծառայության անունից  Ինարա Պետերսոն Գլխավոր տնօրեն	Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության անունից  Գագիկ Խաչատրյան Նախարար
---	--